ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԸ
ԹԻՖԼԻՍԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Արվեստագիտ. դոկտոր Մ. Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայ ականավոր կոմպոզիտոր Մակար Եկմալյանի գիտական կենսագրությունը դեռևս գրված չէ։ Դրան մեծապես խանգարում է փաստական նյութի պակասը։ Մեր երաժշտագիտությունը շատ անելիքներ ունի նման նյութերի հավաքման և չպարզաբանված հարցերի ուսումնասիրության ուղղությամբ։ Այդպիսի հարցերից է նաև Եկմալյանի աշխատանքը Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում։ Այն կարճատև եղավ, տևեց ընդամենը մեկ ուսումնական տարի։

Ներկա հոդվածի նպատակն է փորձել արխիվային նոր փաստաթղթերի հիման վրա պարզաբանել Եկմալյանի կենսագրության մեջ մութ մնացած այդ խնդիրը։

* * *

Երաժշտական բարձրագույն կրթություն ստանալուց հետո Եկմալյանը մնաց Պետերբուրգում և ղեկավարում էր տեղի հայկական եկեղեցու երգչախումբը, բայց այդ նրան բավարարել չէր կարող և նա փնտրում էր գործունեության ավելի լայն ասպարեզ։ Նա ցանկանում էր իր գործունեությունը ծավալել հայաշատ կենտրոններից մեկում, զբաղվել մանկավարժական ու ստեղծագործական աշխատանքով, իր ստացած գիտելիքները ներդնել հայրենի երաժշտական մշակույթի զարգացման գործում։

Հրավեր ստանալով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ղեկավարությունից՝ ստանձնել դպրոցի երաժշտության դասերը և ղեկավարել դպրոցական երգչախումբը, Եկմալյանն ընդունեց այն և 1891 թ. սեպտեմբերից անցավ աշխատանքի։ Թե որքան նշանակալից էր նրա աշխատանքը Ներսիսյան դպրոցում, կարելի է տեսնել թեկուզ և այն փաստից, որ Ներսիսյան դպրոցի երգեցիկ խումբը մի քանի տարում փաստորեն դարձավ հայ անդրանիկ պրոֆեսիոնալ երգչախումբը, որի կատարողական արվեստը հռչակվեց ամբողջ Անդրկովկասում և ընդհանրապես հայ իրականության մեջ։ Բացի այդ, նրա ձեռքի տակ դաստիարակվեցին և հետագայում որպես երաժշտական գործիչներ հռչակվեցին Ա. Շահմուրադյանը, Տ. Նալբանդյանը, Շ. Տալյանը, Ա. Մայիլյանը, Ա. Տեր-Հովհաննիսյանը, Ա. Մանուկյանը, Մ. Աղայանը և շատ ուրիշներ։

Սակայն այդ բոլորով հանդերձ Եկմալյանը հոգեպես բավարարված չէր։ Նրա հնարավորություններն ու կարողությունն ավելի մեծ էին, քան դրանց գործադրման սահմանները։ Թիֆլիսի պայմաններում, ուր գոյություն ուներ երաժշտական ուսումնարան, նա կարող էր օգտակար լինել նաև մասնագիտական երաժշտական ուժերի պատրաստման գործում։ Դրանում համոզված էին այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Ա. Գ. Ռուբինշտեյնը և Պ. Ի. Չայկովսկին, որոնք իրենց հանձնարարական նամակներով ցանկանում

էին օգնել Եկմալյանին այդ բանում[1]։ Հատկապես նշանակալից էր այն, որ Պետերբուրգի կոնսերվատորիայի ռեկտոր, դաշնակահար-կոմպոզիտոր Ա. Ռ. Ռուբինշտեյնը հատուկ նամակով դիմել է Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիային՝ խնդրելով տեղեկություններ հաղորդել այն մասին, թե երաժշտական ուսումնարանում արդյոք չկա՞ն ազատ տեղեր երաժշտության տեսության, երգչախմբի և նվագախմբի ղեկավարության գծով։

Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիան՝ հանձին Ի. Ե. Փիթոևի և երաժշտական ուսումնարանի ղեկավարությունը՝ հանձին կոմպոզիտոր Մ. Իպոլիտով-Իվանովի դրականորեն վերաբերվեցին այս հարցին, և 1893 թ. մայիսի 15-ին Եկմալյանը հրավեր ստացավ՝ ստանձնել Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի վերատեսչի և երաժշտական-տեսական առարկաների դասատուի պաշտոնները։ Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիան երեք տարվա ժամկետով նրա հետ պայմանագիր կնքեց, և 1893 թ. սեպտեմբերի 1-ից Եկմալյանն անցավ աշխատանքի։

Սակայն նոր ուսումնական տարվա նախօրյակին, ամռան ամիսներին, տեղի ունեցան մի շարք դեպքեր, որոնք բարդացրին իրադրությունը և Եկմալյանի գործունեության ծավալման համար ստեղծեցին աննորմալ պայմաններ։ Մամուլում, հատկապես Պետերբուրգի «Новое время» թերթում, տպագրվեց մի նամակ Veritas ծածկանվան տակ, որի մեջ Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի դիրեկտոր Իպոլիտով-Իվանովը մեղադրվում էր ուսանողներին պարտադիր կարգով Թիֆլիսի արտիստական ընկերության օպերետային ներկայացումներին մասնակից դարձնելու, դրանով իսկ ուսումնարանի քայքայման պատճառ դառնալու և այլ հարցերում։ Այս հոդվածը իր սուր ծայրով ուղղված էր Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի (առաջին հերթին նախագահ Ի. Ե. Փիթոևի) և երաժշտական ուսումնարանի դիրեկտոր Իպոլիտով-Իվանովի դեմ։

Խորապես վիրավորված այդ հոդվածից և իրենց մասին քաղաքում տարածված բամբասանքներից, ինչպես Փիթոևը, նույնպես և Իպոլիտով-Իվանովը թողնում-հեռանում են ասպարեզից։ Փիթոևը հրաժարվում է Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիայի նախագահի պաշտոնից, իսկ Իպոլիտով-Իվանովը տեղափոխվում է Մոսկվայի կոնսերվատորիա։ Կանոնադրության համաձայն, ուսումնարանի դիրեկտորի պարտականությունները մեխանիկորեն դրվում են Եկմալյանի վրա՝ մինչև նոր դիրեկտորի նշանակումը։

Այսպիսով, դեպքերի բերմամբ, Եկմալյանը փաստորեն մնում է մենակ և ուսումնարանի ղեկավարության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է նրա վրա։

Եկմալյանն իրեն հատուկ բարեխղճությամբ ու եռանդով գործի է անցնում։ Ամենից առաջ նա ձգտում է ամբողջ ուսումնական աշխատանքը տանել նախ-

[1] Այս մասին նշված է Եկմալյանի դիմումի մեջ, ուղղված Ռուսական կայսերական երաժշտական ընկերության նախագահին, գրված 1894 թ. օգոստ. 25-ին։ Տե՛ս Լենինգրադի Գավառային պատմական արխիվ, ֆ. 408, գ. 314, թ. 88։ Ա. Գ. Ռուբինշտեյնի հանձնարարական նամակի լուսանկար պատճենը տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում, ֆ. 5։

կին նորմալ հունով, բարելավել աշակերտների հաճախումները, հատուկ ուշադրություն է դարձնում դասատուների և աշակերտների փոխհարաբերության հարցերին, ցուցաբերում է խստապահանջություն թե՛ դասատուների, և թե՛ աշակերտների նկատմամբ։ Այս ամենի շնորհիվ ուսումնական տարին հաջողությամբ ավարտվում է։ Եվ չնայած եռակի ծանրաբեռնվածությանը և իր համար անսովոր վարչական աշխատանքին, նա պատվով է դուրս գալիս։ Այդպես էլ ամեն ինչ բարեհաջող կանցներ, եթե տարվա ընթացքում տեղի չունենային մի քանի դեպքեր և պատճառ չդառնային հարաբերությունների սրմանը նրա և Ալիխանովի միջև։

Որո՞նք էին այդ դեպքերը և ի՞նչ առնչություն ունեին Եկմալյանի հետ։

Ինչպես արդեն վերը տեսանք, Veritas-ի հարվածը իր նպատակին հասավ և ղլխավոր արգելքները վերացան՝ Փիթոևն ու Իպոլիտով-Իվանովը հեռացան։ Սակայն այդ բավական չէր։ Փիթոևի հեռանալուց հետո Ալիխանովը միջոցներ է ձեռնարկում, որպեսզի ոչ միայն ապահովվի իր վերադարձը Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիայի նախագահի պաշտոնում, այլև այն վերածվի հանդիսավոր ցույցի ընդդեմ նախկին դիրեկցիայի։ Նա կազմակերպում է ընկերության մեջ նոր անդամների ընդունելություն հատկապես այն մարդկանցից, որոնք անվերապահորեն լավ էին տրամադրված իր նկատմամբ և իր ընկեր Ա. Օ. Միղանդարիի միջոցով սկսում է նախապատրաստել ընկերության հին անդամներին։ Վերջինս դիմում է նաև Եկմալյանին՝ հորդորելով նրան անպայման քվեարկել Ալիխանովի օգտին։ Եկմալյանը պատասխանում է, թե ինքը ոչնչով դեմ չէ Ալիխանովի ընտրությանը, բայց եթե ինքը քվեարկի նրա օգտին, դա կդիտվի որպես ցույց նախկին դիրեկցիայի դեմ, մինչդեռ ինքն այդպիսի բան չէր ցանկանա, քանի որ իր հարաբերությունները նախկին դիրեկցիայի հետ եղել են նորմալ-բարեկամական։ Եկմալյանի այսպիսի պատասխանը դուր չի գալիս Ալիխանովին։ Դրա հետևանքով կողմերի միջև հարաբերությունները դառնում են չոր ու պաշտոնական։ Մի այլ դեպք լրացնում է թերին և նրանց միջև եղած հարաբերություններն ստանում են թշնամական բնույթ։ Նույն Միղանդարին կազմակերպում է Ալիխանովին ուղղված որավոր մի դիմում, որի մեջ երաժշտական ուսումնարանի դասատուները դիմում էին նրան, խնդրելով գալ և կործանումից փրկել ընկերությունն ու երաժշտական ուսումնարանը։ Եկմալյանը կտրականապես հրաժարվում է այդ դիմումի տակ ստորագրելուց, պատճառաբանելով, որ ուսումնարանը ենթակա է երաժշտական ընկերության բաժանմունքի դիրեկցիային և ուսումնարանի դասատուներն իրավունք չունեն որևէ մեկին հրավիրել դիրեկտորի պաշտոնի, բացի այդ, ուսումնարանը բոլորովին էլ աղետալի վիճակում չէ և կարիք չունի նման փրկարարի։ Պարզ է, որ Եկմալյանի այս պատասխանը նույնպես դուր չի գալիս դիմումի կազմակերպիչներին։

Դեպքերի բերումով Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիայի նախագահ է ընտրվում նույն Միղանդարին, իսկ դիրեկցիայի կազմի մեջ՝ Կ. Մ. Ալիխանովի կողմնակիցները մեծամասնություն են կազմում։ Եվ ահա, օգտվելով Եկմալյանի հետ կնքված պայմանագրի վեցերորդ կետից, ըստ որի՝ «եթե դիրեկցիան առաջին տարվա ընթացքում կգտնի, որ ես, Եկմալյանս, չեմ բավարարում պայմանագրի բոլոր պահանջներին, ապա դիրեկցիան աղատ է ինձ մերժել և ներկա պայմանագիրը համարել չեղ-

լալ»[2],— երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիան 1894 թ. մայիսի 29-ի իր նիստում որոշում է ընդունում Եկմալյանին ազատել թե՛ ուսումնարանի դիրեկտորի, թե՛ վերատեսչի, և թե՛ դասատուի պաշտոնից[3]։ Հետաքրքիր է այն, որ այս որոշման մասին նույն օրն ևեթ հայտնվում է Եկմալյանին՝ առանց ազատման վերաբերյալ որոշման որևէ հիմնավորման ու պատճառաբանության։ Դիրեկցիայի անդամներից միայն Օպոչինինն է մնում առանձին կարծիքի և Եկմալյանի ազատումը որակում է որպես «կուսակցական կրքերի» հետևանք։ Այս հարցի մասին նա ոչ միայն հանդես է գալիս մամուլում՝, այլև հատուկ զեկուցագիր է ուղարկում Պետերբուրգ, Ռուսական կայսերական երաժշտական ընկերության գլխավոր դիրեկցիային։ Այդ զեկուցագրի մեջ Եկմալյանի մասին կարդում ենք.

«Վերն արդեն ասվեց, թե ինչ պայմաններում նախկին դիրեկցիայի կողմից Եկմալյանը հրավիրվեց վերատեսչի պաշտոնի։ Նրա հետ պայմանագիր կնքվեց երեք տարով։ Իպոլիտով-Իվանովի նման փորձված դիրեկտորի ղեկավարությամբ իբրև վերատեսուչ աշխատելու փոխարեն, բախտը, ինչպես այդ երևում է վերը շարադրվածից, պարոն Եկմալյանին դրեց ուսումնարանի գլուխը որպես դիրեկտորի պաշտոնակատար, այն էլ վերը նշված բոլոր թյուրիմացությունների ծագման շրջանում։ Այնուամենայնիվ, այդ սեզոնում ուսումնարանում ուսումնական գործն ընթացավ հաջող, իսկ վերատեսչի պաշտոնում պ. Եկմալյանը ցուցաբերեց օրինակելի բարեխղճություն և էներգիա, ուսումնարանի կարգապահությունը դնելով անհրաժեշտ բարձրության վրա։ Ո՛չ դիրեկտորի պաշտոնակատարի, և ո՛չ էլ վերատեսչի պաշտոնի կապակցությամբ պ. Եկմալյանը տարվա ընթացքում դիրեկցիայի կողմից ոչ մի դիտողություն չի ստացել։ Չնայած դրան, դիրեկցիան իր 1894 թ. մայիսի 29-ի նիստում որոշեց պ. Եկմալյանին ազատել վերատեսչի պաշտոնից և դադարեցնել նրա հետ կնքված պայմանագրի հետագա գործողությունը՝ նրան համարելով անընդունակ պայմանագրով իր վրա վերցրած պարտավորությունների կատարման համար։ Այս որոշումն ընդունվեց պ. պ. Միղանդարիի, Կ. Մ. Ալիխանովի, Վ. Ռ. Կորգանովի և թեկնածու Թամամշևի ձայների մեծամասնությամբ..., ընդդեմ Օպոչինինի ձայնի, որն արձանագրել տվեց իր առանձին կարծիքը՝ Եկմալյանի ազատումը համարելով կուսակցական անարդարության մի ակտ (ընդգծված է կարմիր մատիտով— Մ. Մ.)։ Եթե նկատի ունենանք վերը շարադրվածը և հիշենք, որ Եկմալյանը հանդիսանում է ընդհանրապես հին դիրեկցիայի և մասնավորապես Իպոլիտով-Իվանովի ընտրյալը և որ նա հրաժարվեց ստորագրել պ. Ալիխանովին ուղղված դիմումը, ապա դժվար չէ հասկանալ, որ նրա ազատումը չուներ իրավական՝ նկատի ունենալով պայմանագիրը, և ոչ էլ որևէ այլ արդարացիություն. ընդհակառակը, անկասկած պարունակում է միայն կուսակցական կրքերի նշաններ։ Այս ակտը անարդարացի լինելուց բացի, իսկապես հանդիսանում է չափազանց անգութ, քանի որ Եկմալյանի, որպես պրոֆեսիոնալ արվեստագետի վրա հավիտենապես դնում է խոտանվածի կնիք,

[2] Государственный исторический архив Ленинградской области, ֆ. 408, գ. 314, թ. 93։

[3] Նույն տեղում, թ. 86։

[4] Տե՛ս „Три письма в редакцию", տպագրված Թիֆլիսի „Новое Обозрение" թերթի 1894 թ. փետրվարի 11-ի (№ 3482), փետրվարի 12-ի (№ 3483) և փետրվարի 13-ի (№ 3484) համարներում։

որը կարող է նրան զրկել մի կտոր հացից։ Մենք կարծում ենք, որ գլխավոր դիրեկցիան չի կարող հանդուրժել նման կամայականություն իր բաժանմունքներից մեկի կողմից մի մարդու նկատմամբ, որն ունի Պետերբուրգի կոնսերվատորիայի դիպլոմ, քանի որ պ. Եկմալյանի կողմից իր իրավունքների վերականգնումը դատական կարգով կստեղծի իսկապես սկանդալային պրոցես, որովհետև չի կարելի պայմանագրային ժամկետից շուտ և այն էլ առանց պատճառաբանության, միայն անընդունակության պատրվակով, ազատել մեկին, որն իր մի տարվա ծառայության ընթացքում նույն դիրեկցիայից չի ստացել և ոչ մի դիտողություն»[5]։

Եկմալյանի վրա հատկապես շատ էր ազդել այս վերջին հանգամանքը։ Մի ամբողջ տարի նա անձնվիրաբար աշխատել էր Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում՝ իր վրա կրելով վարչական և ուսումնական աշխատանքի ծանրությունը, ամբողջ ակադեմիական տարվա ընթացքում չէր ստացել ոչ մի դիտողություն, և, ընդհակառակը, լսել էր միայն գովասանքներ իր հասցեին։ Այս ամենից հետո նրա համար իբրև մեծագույն վիրավորանք հնչեց Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիայի 1894 թ. մայիսի 29-ի որոշումն իր ազատման մասին։ Եվ նա ամեն կերպ աշխատում էր հասնել այդ որոշման վերացմանը և իր ոտնահարված իրավունքների վերականգնմանը։ Նա մի քանի դիմում գրեց Ռուսական կայսերական երաժշտական ընկերության գլխավոր դիրեկցիայի անունով, նույնիսկ մեկնեց Պետերբուրգ, որպեսզի տեղում անձամբ զբաղվի այդ հարցի վերանայման գործով։ 1895 թ. հունվարի 4-ի իր դիմումի մեջ Եկմալյանը գրում էր.

«Նոր ադմինիստրացիայի այդպիսի անսանձ կամայականությունը՝ խորապես վիրավորական իմ պատվի և Ռուսաստանի բարձրագույն երաժշտական հաստատության կողմից դիպլոմավորված արվեստագետի համբավի համար, ես չեմ կարող թողնել անուշադիր։ Մինչև այժմ էլ գտնվելով ինձ հասցրած վիրավորանքի ճնշող տպավորության տակ, ես, դարձյալ Կովկասից Պետերբուրգ գալով, դիմում եմ գլխավոր դիրեկցիայի լուսավորյալ աջակցությանը՝ խոնարհաբար խնդրելով վերականգնել ոտնահարված իմ պատիվը և վերադարձնել ուսումնարանի ինսպեկտորական մասի ղեկավարման իմ պարտականություններն ըստ պայմանագրի»[6]։

Վերջ ի վերջո Եկմալյանին հաջողվեց հասնել գործի վերանայմանը։ Ռուսական կայսերական երաժշտական ընկերության գլխավոր դիրեկցիան, 1895 թ. փետրվարի 24-ի նիստում քննության առնելով նրա դիմումը, ընդունեց հետևյալ որոշումը.

«Նկատի ունենալով այն, որ դիրեկցիան պ. Եկմալյանին ազատել է ուսումնարանի վերատեսչի պաշտոնից, ինչպես երևում է պ. Եկմալյանի՝ դիրեկցիային գրած հայտարարությունից, իր հետ կնքված պայմանագիրը խախտելով և իր գործունեությունն ընդհանուր բնորոշմամբ անբավարար համարելով, ընդ որում այդ բանը ոչ մի տվյալով ու պատճառներով չհիմնավորելով,— պահանջել դիրեկցիայից ներկայացնել բացատրություն արձանագրու-

---

5 Ռուսական կայսերական երաժշտական ընկերության (ՌԵՄՕ) Թիֆլիսի բաժանմունքի դիրեկտոր Պ. Ա. Օպոչինինի զեկուցագիրը նույն ընկերության գլխավոր դիրեկցիային։ Տե՛ս Гос. исторический архив Ленинградской области, ֆ. 408, գ. 314, թթ. 97—106։

6 Նույն տեղում, թ. 109։

թյան բնորոշմամբ հանդերձ, իսկ մինչև դրա քննարկումը պ. Եկմալյանին վերատեսչի պաշտոնից չհամարել ազատված»[7]։

Սակայն գործը սրանով չավարտվեց։ Մի քանի ամիս տևող գրասենյակային քաշքշուկից, Եկմալյանի դիմումների հիման վրա գլխավոր դիրեկցիայի եռակի հիշեցումներից հետո Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիան Կ. Մ. Ալիխանովի ստորագրությամբ ներկայացնում է իր բացատրությունը (28 հոկտեմբերի 1895 թ., № 370), որի մեջ իբրև Եկմալյանի ազատման պատճառներ բերված են՝ ռուսերենին չտիրապետելը, երաժշտական լսողության և ռիթմի զգացողության անբավարարությունը, որի հետևանքով, իբր, նա չի կարողանում ղեկավարել ուսումնարանի նվագախումբն ու երգչախումբը, Եկմալյանի անբավարար գեղարվեստական զարգացումը և դասատուների հետ վերաբերվելու տակտի բացակայությունը[8]։

Այս պատճառաբանությունն, իհարկե, լիովին հերյուրանք էր Եկմալյանի նման արվեստագետի հասցեին, որն արդեն կազմակերպել էր Ներսիսյան դպրոցի հիանալի երգչախումբը և հանդես եկել հայկական պատարագի հատվածների բազմաձայն կատարմամբ՝ դառնալով ամբողջ հայության (և ոչ միայն հայության) հետաքրքրության առարկան և որը մի տարի անց հրատարակեց իր մշակած պատարագը՝ արժանանալով Պետերբուրգի կոնսերվատորիայի գեղարվեստական խորհրդի և Պալատական կապելլայի խորհրդի դրական գնահատականներին։ Երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի նոր ղեկավարության թշնամական կիրքը քողարկելու նպատակն է հետապնդել գրեթե երկու տարի հետո գրված և Ալիխանովի ստորագրությամբ հաստատված այս «պատճառաբանությունը»՝ որպես Եկմալյանի ազատման հիմնավորում։

Թե որքանով էին ճիշտ Եկմալյանի վրա բարդված այս մեղադրանքները և որքանով էին դրանք համապատասխանում իրականությանը, կարելի է տեսնել Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի մի այլ դասատուի, հայտնի օպերային երգիչ, պրոֆ. Ֆ. Պ. Կոմիսարժևսկու դիմումից՝ ուղղված Ռուսական երաժշտական ընկերության գլխավոր դիրեկցիային, դասատու, որի հետ կրկնվեց նույնը, ինչ մի տարի առաջ տեղի էր ունեցել Եկմալյանի հետ։

Պրոֆ. Կոմիսարժևսկու դիմումի մեջ նախ նկարագրվում է այն քաոսը, որ տիրել է Թիֆլիսի բաժանմունքում Ի. Ն. Փիթոևի և Իպոլիտով-Իվանովի հեռանալուց հետո։ «Ուսումնարանի համար,— գրում է նա,— սկսեցին տխուր օրեր՝ արտահայտվելով ինտրիգների, սադրանքների, դիրեկցիայի կողմից դասատուների նկատմամբ սխալ վերաբերմունքի ձևով՝ անբարենպաստ կերպով ազդելով ուսումնարանի գիտա-դաստիարակչական ուղղության վրա։ Նման քաոսի առաջին զոհը դարձավ դիրեկտորի պարտականությունները կատարող, ուսումնարանի տեսուչ պ. Եկմալյանը՝ գործունյա, ազնիվ մի մարդ, որն անն-ռեսպաշտորեն ծառայում էր գործին և ուսումնարանի գիտական շահերին, բարեխիղճ կատարում էր իր պարտականությունները, բոլոր միջոցներով պաշտպանելով ուսումնարանի համբավը։ Ապացուցելով խախտված կարգապահության վնասակարությունը, պաշտպանելով գեղարվեստական խորհրդի և նրա որոշումների նշանակությունը, անընդհատ մատնանշելով անհրաժեշտությունը

[7] Նույն տեղում, ֆոնդ 408, նկարագր. 1, գ. 294, „Журналы заседаний Главной дирекции ИРМО“, թթ. 65–66։

[8] Տե՛ս նույն տեղում, ֆ. 408, գ. 314, թթ. 120–121։

գիտական ծրագրերի, առանց որոնց անհնար է հասնել ճիշտ ու սիստեմատիկ դասավանդման, հետևապես և ցանկալի գիտական արդյունքների, հոգ տանելով այն մասին, որպեսզի ճիշտ հարաբերություններ ստեղծվեն դիրեկցիայի կողմից՝ դասատուների նկատմամբ, իսկ վերջիններիս կողմից՝ աշակերտների նկատմամբ, անընդհատ հիշեցնելով և պահանջելով դասատուներից՝ կանոնավոր կերպով հաճախել դասարանները և ունենալ արժանավայել վերաբերմունք աշակերտների նկատմամբ, ինչպես և աշակերտներից՝ ունենալ տանելի վարք դասարաններում և խստորեն կատարել կանոնադրությունը և ուսումնարանական հրահանգը։ Իր անկաշառ անկողմնապահությամբ, խստությամբ և էներգիայով պ. Եկմալյանն իր դեմ հանեց ինչպես դիրեկցիային, այնպես էլ ամբողջ ուսումնարաեր և դարձավ վիրավորանքների ու ինտրիգների զոհ։ Դիրեկցիան անընդհատ հանդիպելով նրա բողոքներին, ինչպես կատարված անկարգությունների, նույնպես և անձնական գործողությունների կապակցությամբ, որոնք հանդիսանում էին դրանց գլխավոր պատճառները, դիմեց ճնշման միջոցի, որն արտահայտվեց նրա հետ կնքված պայմանագրի ապօրինի խախտման մեջ։ Պ. Եկմալյանի, այդ կրթված ու կայուն գործչի նկատմամբ տեղի ունեցած անարդարությունն ինձ համոզեց, որ նման դեպք կարող է կրկնվել այս հիմնարկում ծառայող յուրաքանչյուրի հետ, որն իր գործին ազնվորեն է վերաբերվում, և իմ մեջ միտք հղացավ թողնել ուսումնարանը։ Ինձ ետ պահեց միայն այն, որ ես կաշկանդված էի երեք տարվա պայմանագրով և դրա խախտման դեպքում պիտի պատասխանեի երկու հազար ռուբլու վճարումով»[9]։

Պրոֆ. Կոմիսարժևսկու դիմումի այս հատվածը շատ բան է պարզում ինչպես Ռուսական կայսերական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքում և ուսումնարանում տիրող ընդհանուր մթնոլորտի, այնպես էլ հատկապես Եկմալյանի՝ որպես երաժշտական մասնագետի ու գործչի բնութագրության տեսակետից։ Եթե այս բնութագիրը համեմատելու լինենք Կ. Մ. Ալիխանովի ստորագրությամբ գլխավոր դիրեկցիային ուղղված գրության մեջ նույն Եկմալյանի վերաբերյալ տրված բնութագրության հետ, ապա միանգամայն պարզ կդառնա վերջինիս ամբողջ միտումնավորությունը։ Պարզ է, որ Թիֆլիսի բաժանմունքի նոր դիրեկցիան հանձին Ալիխանովի իրագործելով իր մտադրությունը՝ վրեժ լուծել Եկմալյանից, ըստ էության քողարկվել է սարքովի այդ բնութագրով և Եկմալյանի հետ կնքված պայմանագրի 6-րդ կետով։ Իսկ գլխավոր դիրեկցիան ճիշտ կերպով հասկանալով գործի էությունը և վերը մեջբերված որոշմամբ Եկմալյանի հեռացումը փաստորեն չհիմնավորված համարելով հանդերձ, հետագայում ղեկավարվել է ձևական հանգամանքներով և Թիֆլիսի բաժանմունքի դիրեկցիայի այդ անարդարացի որոշումը թողել է ուժի մեջ։ Այդ երևում է գլխավոր դիրեկցիայի 1896 թ. հունվարի 26-ի նիստի արձանագրությունից, որի մեջ Եկմալյանի դիմումի վերջնական քննարկման վերաբերյալ հանված է հետևյալ աշառու և բյուրոկրատական որոշումը։

«Առանց պ. Եկմալյանի ազատման պատճառներին անդրադառնալու, նրկատի ունենալով (Թիֆլիսի բաժանմունքի) դիրեկցիայի ներկայացրած բացատրությանը, գտնել, որ նա գործել է կանոնադրության և պայմանագրի սահմաններում»[10]։

---

[9] Նույն տեղում, ֆ. 408, գ. 314, թ. 129—130։

[10] Նույն տեղում, ֆ. 408, նկարագր. 1, գ. 294, թ. 76։

Տարիներ տևող քաշքշուկից հետո Եկմալյանի համար բարոյական խոշոր նշանակություն ունեցող և նրան մեծապես մտահոգող այդ գործը, ինչպես տեսանք, ունեցավ իր համար բոլորովին անսպասելի վախճան։ Դա, անկասկած, խոր հիասթափություն պատճառեց Եկմալյանին և ազդեց նրա հոգեկան աշխարհի վրա։ Գլխավոր դիրեկցիայի առաջին որոշումից հետո նա չէր կարող մտածել, որ գործն այդպիսի ընթացք կստանա և կավարտվի այդքան ձևականորեն։ Ըստ երևույթին գործի նման վախճանը նախապատրաստվել էր Թիֆլիսի բաժանմունքի նշանակած լիազոր ներկայացուցչի կողմից, որն իրավաբան լինելով, առաջ էր քաշել գործի իրավական հանգամանքները և գլխավոր դիրեկցիայի ուշադրությունը հեռացրել էր գործն ըստ էության, Եկմալյանի ազատման բուն պատճառների տեսակետից քննարկելուց։

Այսպիսով, Եկմալյանն ընդամենը մեկ ուսումնական տարի աշխատեց Թիֆլիսի երաժշտական ուսումնարանում և իր կամքին հակառակ ստիպված էր հեռանալ։ Նա շատ լավ և մոտիկից դիտեր այդ ուսումնարանում տիրող դրությունը։ Եվ երբ 1895 թ. աշնանը Թիֆլիս եկավ Կոմիտասը՝ ցանկություն հայտնելով այնտեղ ընդունվել սովորելու, Եկմալյանը հասկանալի պատճառներով նրան ետ պահեց այդ մտքից, համոզված կերպով պնդելով, որ նա այնտեղ սովորելու ոչինչ չունի։ Ինքն էլ հանձն առավ նախապատրաստել նրան կոնսերվատորիայի ընդունելության քննություններին։

Կարճատև եղավ, ընդամենը մեկ տարի տևեց Եկմալյանի աշխատանքը նաև «Թիֆլիսի երաժշտասերների խմբակում», ուր նա ստանձնել էր երգչախմբի դիրիժորի պաշտոնը։

Երաժշտական լայն գործունեություն ծավալելու այս անհաջող փորձերից հիասթափված և խորապես դառնացած, Եկմալյանը դառնում է ավելի ինքնամփոփ և Ներսիսյան դպրոցում իր պարտականությունները կատարելուց բացի զբաղվում է միայն ստեղծագործական աշխատանքով։ «Պատարագի» տպագրությունից հետո նա իր ուշադրությունը կենտրոնացնում է հայ ժողովրդական և ազգային-հայրենասիրական երգերի մշակման, ինչպես և հայ բանաստեղծների խոսքերով նոր խմբերգեր և մեներգեր, դաշնամուրային պիեսներ և այլ գործեր ստեղծելու վրա։

Սակայն ի լրումն այն ամենի, ինչ արդեն տեղի էր ունեցել Եկմալյանի հետ Ներսիսյան դպրոցում ևս, ըստ երևույթին իր ներվայնության հետևանքով, նրա շուրջն ստեղծվում է անառողջ մթնոլորտ։ Ինքը խուսափում է մտերմական հանդիպումներից, դառնում ավելի ներփակված ու մտածկոտ և վարում մեկուսացված կյանք։ Նախկին ընկերներից ու պաշտոնակիցներից շատերը հետզհետե հեռանում են նրանից։ Այդ մասին է վկայում Ներսիսյան դպրոցի 1893—1904 թթ. հոգաբարձական դիվանի գործավար Ռուբեն Մելիք-Ադամյանի նամակը «Տարազի» խմբագրությանը[11]։

Նման վերաբերմունքը, իհարկե, չէր կարող չազդել նրբազգաց արվեստագետի հոգու վրա, չդառնացնել նրան։ Արվեստագետի նուրբ հոգին չդիմացավ։

Թիֆլիսի, Օդեսայի, Խարկովի հոգեբույժները գտան, որ նրա հիվանդությունն անբուժելի է։ Օգափոխությունը հայրենի Վաղարշապատում նույնպես

11 Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1905, № 9, էջ 118։

օգուտ չբերեց, և երկու տարվա տանջանքներից հետո, 1905 թ. մարտի 6-ին, նա կնքեց իր մահկանացուն՝ իր հետ տանելով ստեղծագործական բաղում մտահղացումներ և հարազատ ժողովրդին թողնելով այնպիսի ստեղծագործություններ, որոնք այսօր էլ իրենց արժանավոր տեղն են գրավում հայ դասական երաժշտության գանձարանում։

МАКАР ЕКМАЛЯН В ТИФЛИССКОМ МУЗЫКАЛЬНОМ УЧИЛИЩЕ

Доктор искусствоведения М. О. МУРАДЯН

(Резюме)

Научная биография известного армянского композитора Макара Екмаляна еще не создана. Причина этого — недостаточность фактического материала. Многие вопросы остаются неизученными. К числу их принадлежит и вопрос о работе Екмаляна в Тифлисском музыкальном училище, продолжавшейся всего один учебный год (1893—1894).

В статье приводятся интересные архивные данные, относящиеся к указанному периоду жизни Екмаляна.